«Նոր ժամանակի կրթություն» ՀԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ

Ա Վ Ա Ր Տ Ա Կ Ա Ն Հ Ե Տ Ա Զ Ո Տ Ա Կ Ա Ն Ա Շ Խ Ա Տ Ա Ն Ք

Հետազոտության թեման՝ «Ուսուցչի մասնակցությունն ուսումնական հաստատության մեթոդմիավորումների /առարկայական մասնախմբերի/ աշխատանքներին»

Առարկան՝ «Հայոց լեզու և գրականություն»

Հետազոտող ուսուցիչ՝ Նարինե Հրանտի Սաղոյան

Ուսումնական հաստատություն՝ Երևանի Ա.Չեխովի անվան հ. 55 դպրոց

Երևան 2022

Ուսուցչի մասնակցությունն ուսումնական հաստատության մեթոդմիավորումների /առարկայական մասնախմբերի/ աշխատանքներին

Հետազոտական աշխատանքի արդիականությունը: Արագ զարգացող աշխարհում պետությունը և հասարակությունը առանձնահատուկ խնդիրներ են առաջադրում ուսումնական հաստատություններին, պահանջում ուսուցիչների նոր կարողունակությունների ձևավորում, ոչ սովորական իրադրություններում մանկավարժական խնդիրներ լուծելու պատրաստակամություն, ուսուցման բարձր որակի ապահովում:

Բոլոր ժամանակներում հակասություն է եղել դպրոցին ներկայացվող սոցիալ-տնտեսական պահանջների և մանկավարժական կադրերի՝ որակավորման գոյություն ունեցող մակարդակի, ուսուցման և դաստիարակության նոր խնդիրներ լուծելու պատրաստվածության միջև: Պետք է կատարելագործել կրթական գործունեության բոլոր տարրերը, այդ թվում՝ ուսուցչի մանկավարժական գործունեությունը: Հենց նրա՝ նոր մարտահրավերներին արձագանքելու կարողությամբ է պայմանավորված ուսումնական հաստատության աշխատանքի հաջողությունը: Այսօրվա ուսուցիչը պետք է իր գործունեությունն իրականացնի գիտամանկավարժական բարձր մակարդակով, մասնագիտական հիմնավոր որոշումներ ընդունի, շարունակի սովորել: Այսօր անհրաժեշտ են կարողունակ ուսուցիչներ, որոնք ի վիճակի են ստեղծագործաբար կազմակերպելու կրթական գործընթացը որոշակի սոցիալ-տնտեսական պայմաններում, արագ կողմնորոշվում են տեղեկատվական դաշտում, ինքնուրույնաբար կատարելագործվում են՝ շարունակելով նոր գիտելիքներ ձեռք բերել: Ուսուցչի անձնային այնպիսի որակը, ինչպիսին մասնագիտական կարողունակությունն է, բնութագրվում է հատուկ գիտելիքների և կարողությունների ամբողջությամբ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական խնդիրներ լուծելու համար:

Հետազոտության առարկան ուսուցչի աշխատանքն է ուսումնական հաստատության մասնագիտական խմբում՝ մեթոդմիավորումում:

Հիմնախնդիրը ուսուցչի անձնային և մասնագիտական որակների կատարելագործումն է մեթոդմիավորման աշխատանքին մասնակցելիս:

Հետազոտության նպատակն է բացահայտել և հիմնավորել ուսուցչի մասնակցության կարևորությունը մեթոդմիավորման աշխատանքին:

Հետազոտության օբյեկտը մեթոդմիավորումն է՝ որպես ուսուցչի մասնագիտական կարողունակության զարգացման գործոն և միջավայր:

Հետազոտության գիտական վարկածը բխում է հետազոտության օբյեկտից, նպատակից և առարկայից: Ուսուցիչների ներգրավվածությունը ուսումնական հաստատության մեթոդմիավորումների աշխատանքին կնպաստի նրանց մասնագիտական կարողունակության զարգացմանը:

Հետազոտության հիմնական նպատակի և վարկածի համաձայն առաջ են քաշվել հետևյալ խնդիրները.

1. ուսումնասիրել մեթոդմիավորումների առաջացումն ու զարգացումը,
2. անդրադառնալ մեթոդմիավորումների աշխատանքի սկզբունքներին,
3. որոշարկել ուսուցչի կարողունակության զարգացման նախապայմանները մեթոդմիավորման գործունեությանը մասնակցելու դեպքում:

Մեթոդմիավորումը կրթական հաստատության կարևորագույն կառուցահատված է: Այն ստեղծվում է դասավանդման արդի մակարդակի ապահովման, ուսուցիչների մասնագիտական վարպետության, սովորողների գիտելիքների մակարդակի բարձրացման, ընդհանուր առմամբ՝ ուսումնադաստիարակչական գործընթացի կատարելագործման նպատակով: Մեթոդմիավորումների աշխատանքը պետք է համակարգային բնույթ կրի:

Ուսուցման և դաստիարակության խնդիրների հաջող լուծումը մեծապես պայմանավորված է նրանով, թե ինչպես է կազմակերպված մեթոդմիավորումների աշխատանքը դպրոցում:

1. ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄՆ ՈՒ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Ուսումնական հաստատության մեթոդմիավորումների աշխատանքին անդրադառնալուց առաջ տեսնենք, թե ինչ են դրանք, երբ և ինչու են ստեղծվել։

«Մեթոդմիավորում» հասկացությունն ունի պատմական խոր արմատներ։ Մանկավարժների և կրթության ու գիտության ոլորտի այլ աշխատողների մասնագիտական միություններն այլ երկրներում ի հայտ են եկել արդեն 19-րդ դարի վերջին և աստիճանաբար կատարելագործվել 20-րդ դարասկզբին։ Դրանց առաջացումը հիմնականում կապված էր ուսուցիչների նյութական և իրավական ծանր վիճակի հետ։ Սակայն Խորհրդային Միությունում 30-ական թվականների կեսերին ակտիվանում են ուսուցիչների միավորումները, որոնց նպատակը փոխօգնությունն էր, փոխուսուցումը, մասնագիտական մտահորիզոնի ընդլայնումը, ուսուցման և դաստիարակության նոր ձևերի և մեթոդների յուրացումը, մանկավարժական նոր մտահղացումների փորձարկումը և այլն։ Միևնույն առարկան դասավանդող ուսուցիչները մեթոդական գործունեությունը իրականացնում էին միասին։ Այս կամ այն մեթոդմիավորումից դուրս ոչ ոք մնալ չէր կարող, քանի որ բոլոր ուսուցիչներն ընդգրկված էին դրանցում։ 50-ական թվականների կեսերին այս միավորումները ստացան «մեթոդական» անունը, և ողջ երկրի ուսուցիչները միավորվեցին մեթոդմիավորումներում, որոնց խնդիրն էր մեթոդական օգնությունը և սովորողների ուսուցման և դաստիարակության գործընթացում մեթոդական ապահովման զարգացումը։

Մասնագիտական մանկավարժական միավորումները, ստեղծվելով 19-րդ և 20-րդ դարերի սահմանագլխին, նպատակների որոշարկման երկար ճանապարհ են անցել մանկավարժի գործունեությունն ապահովելու համար քաղաքական ու տնտեսական հարցեր լուծելուց մինչև անձնակենտրոն հատկանիշների խնդիրներ, որոնք նպատակա-ուղղված են մանկավարժի մասնագիտական կարողունակության, մանկավարժական մասնագիտական մակարդակի բարձրացմանը։

Գիտնական մանկավարժների մեծ մասի կարծիքով՝ ուսուցչի մասնագիտության մեջ աշխատանքի մասնագիտական բաժանումն էլ դարձել է ուսուցիչների

մասնագիտական միավորումների ծննդյան շարժառիթը՝ այսպիսով նշելով մասնագիտական փոխօգնության առանձնահատկությունը, որն արտահայտվում է գիտական ոլորտի և ուսումնական այն առարկայի առանձնահատկություններում, որը դասավանդում է այս կամ այն ուսուցիչը:

2. ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄՆԵՐԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԱՅԻՆ ԿԱՐԵՎՈՐ ԵՆԹԱԲԱԺԻՆ

Արդի ուսումնական հաստատության մանկավարժական գործընթացը ամբողջություն է, որը ստեղծվում է այդ հաստատության կոլեկտիվի կողմից որոշակի իրադրության մեջ: Քանի որ ուսումնական հաստատության մեթոդմիավորումները կարևորագույն կառուցահատվածներ են, խոսենք դրանց գործունեության մասին:

Ներկայումս հայաստանյան բոլոր դպրոցներում գործում են մեթոդմիավորումներ: Համաձայն հայոց լեզվի երկու հեղինակավոր բառարանների (Է.Աղայան, «Արդի հայերենի բացատրական բառարան», Հ.Աճառյանի անվան լեզվի ինստիտուտ, «Ժամանակակից հայոց լեզվի բացատրական բառարան»)՝ միավորումը «միություն, կազմակերպություն» է: Եթե միավորումը կազմակերպություն է, ապա ենթադրում է մտածված կառուցվածք, ներքին կարգուկանոն, որոշակի ստորակարգություն, պլանավորված, նպատակուղղված աշխատանք:

Մանկավարժների մասնագիտական միավորումը դիտվում է որպես փոքր խումբ, թիմ, կազմակերպություն: Այդ պատճառով մանկավարժների մասնագիտական բոլոր միավորումները կարելի է դիտել որպես նրանց համատեղ գործունեության ձևեր, այսինքն՝ կազմակերպական ձևեր ուսուցիչներին ղեկավարող որոշումներ ընդունելու, դպրոցի ղեկավարմանը մասնակից դարձնելու համար:

Ահա «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության օրինակելի կանոնադրության այն հատվածը, որը վերաբերում է ուսումնական հաստատությունների մեթոդմիավորումներին:

91. Առարկայական մեթոդական միավորումներն ստեղծվում են նույն առարկայի երեք և ավելի ուսուցիչների առկայության դեպքում: Մյուս դեպքերում կարող են ձևավորվել մեթոդական միավորումներ՝ հարակից առարկաների ուսուցիչներից:

92. Դասվարների համար ստեղծվում է տարրական կրթության մեթոդական միավորում:

93. Առարկայական կամ տարրական կրթության մեթոդական միավորումը՝

1) քննարկում է հանրակրթական առարկայական չափորոշիչներին համապատասխան ուսումնական ծրագրերի, ուսումնական պլանների նախագծերը, նոր փորձարկվող դասագրքերը, ձեռնարկները, մեթոդական ձեռնարկները և դրանց քննարկումների վերաբերյալ ուսուցիչներին (դասվարներին) տալիս երաշխավորություններ.

2) քննարկում է կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողի անհատական ուսուցման պլանը.

3) ուսումնասիրում, ընդհանրացնում է մանկավարժական առաջավոր փորձը և այն ներդնում գործնական աշխատանքում.

4) նպաստում է ուսուցիչների (դասվարների) որակավորման բարձրացմանը.

5) որակավորման տարակարգ չունեցող սկսնակ ուսուցիչներին (դասվարներին) նախապատրաստում է ատեստավորման.

6) կազմակերպում է մասնագիտական և մանկավարժական-մեթոդական խորհրդակցություններ, խորհրդատվություններ.

7) ուսուցիչներին (դասվարներին) հաղորդակից է դարձնում մանկավարժության նորագույն նվաճումներին, կազմակերպում է սեմինարներ, մանկավարժական-մեթոդական ընթերցումներ.

8) սահմանված կարգով կազմակերպում է փորձարկվող դասագրքերի փորձաքննություն.

9) մանկավարժական խորհրդում քննարկելուց հետո դպրոցի տնօրենին ներկայացնում է առաջարկություն ուսումնական պլանի դպրոցական բաղադրիչի ժամերի տնօրինման վերաբերյալ.

10) կատարում է ուսումնական պլանով սահմանված դասաժամերի նախնական բաշխում և առաջարկություն է ներկայացնում դպրոցի տնօրենին.

11) կազմակերպում է դպրոցական օլիմպիադաներ, առարկայական մրցույթներ և այլ միջոցառումներ:

94. Տարբեր դպրոցների և ուսուցիչների նախաձեռնությամբ կարող են ստեղծվել միջդպրոցական մեթոդական միավորումներ:

95. Առարկայական մեթոդական միավորումների նիստերը գումարվում են առնվազն յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ: Սահմանված կարգով նիստերն արձանագրվում են:[1]

---

[1] **Օրինակելի կանոնադրություն «Հայաստանի Հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առեվտրային կազմակերպության, կետ 91-95**

Եթե ուշադիր կարդանք այս փաստաթուղթը, ապա կտեսնենք, որ մեթոդմիավորումը բավական լուրջ պարտականություններ և իրավունքներ ունի: Դրա գործունեությունը պայմանավորված է հետևյալ հիմնական գործոններով՝

- ուսումնական հաստատության կրթական գործընթացի կազմակերպմամբ,
- ուսուցչին մեթոդական օգնություն ցույց տալու անհրաժեշտությամբ,
- ուսուցչի՝ անձնական և մասնագիտական աճի ձգտումով,
- կրթական գործընթացի որակի ապահովմամբ,
- մասնագիտական կարողունակության տարբեր մակարդակ ունեցող ուսուցիչների փորձի փոխանակմամբ,
- մասնագիտական շփում իրականացնելու ուսուցչի պահանջով:

Մեթոդմիավորման գործունեությունը ենթադրում է աշխատանքի բաժանում, պատասխանատվություն, կարգուկանոն, գործողությունների, շահերի միասնականություն, նախաձեռնողականություն և այլն:

Մեթոդմիավորումների խնդիրներն են՝

- նորմատիվ-իրավակաբ փաստաթղթերի և առարկային վերաբերող գիտամեթոդական գրականության ուսումնասիրություն,
- դասագրքերի ընտրություն, բովանդակության քննարկում, փոփոխություն անհրաժեշտության դեպքում,
- թեմատիկ պլանների կազմում՝ առարկայական չափորոշչի պահանջներին համապատասխան,
- մանկավարժական առաջավոր փորձի ուսումնասիրություն և հրապարակում, մանկավարժական վարպետության կատարելագործում,
- աշխատանք սկսնակ ուսուցիչների հետ,
- սովորողների գիտելիքների, հմտությունների, կարողությունների որակի բարձրացում,
- դաստիարակչական գործընթացի կատարելագործում,
- ուսումնական գործունեության վերահսկողություն և արդյունքների վերլուծություն,

- մեթոդմիավորման անդամների մասնագիտական ինքնակրթության պլանավորում և արդյունքների վերլուծություն,
- փոխադարձ դասալսումներ՝ հաջորդող անդրադարձով և վերլուծությամբ, դասալսումներ նաև այլ առարկաներ դասավանդող ուսուցիչների մոտ փորձի փոխանակման նպատակով,
- առարկայական շաբաթների, օլիմպիադաների դպրոցական փուլերի կազմակերպում,
- տարբեր բնույթի պարապմունքների անցկացման մեթոդիկայի կատարելագործում, առանձին դասերի անցկացման մեթոդների քննարկում,
- դասավանդման մեթոդիկային վերաբերող զեկուցումներ,
- ուսուցիչների ինքնակրթության խնդրի կարգավորում,
- տեսազննողական պարագաների պատրաստում, նյութատեխնիկական բազայի հնարավորինս ապահովում:

Մեթոդմիավորման աշխատանքի հիմնական ուղղություններն են՝ վերլուծական, տեղեկատվական, կազմակերպչական-մեթոդական:

Վերլուծական գործունեություն նշանակում է ուսուցիչների մասնագիտական և տեղեկութային պահանջների մշտադիտարկում և վերլուծություն, ուսուցիչների մասնագիտական զարգացման և ինքնազարգացման մոտիվացիայի ախտորոշում, մեթոդմիավորման աշխատանքի կազմակերպմամբ բավարարվածության մակարդակի բացահայտում, մեթոդմիավորման անդամների մասնագիտական պահանջմունքների ուսումնասիրություն, ուսուցիչների մասնագիտական թղթապանակների /պորտֆոլիո/ ստեղծում:

Տեղեկատվական ուղղությունը ենթադրում է մանկավարժության հետ կապված տեղեկությունների բանկի ստեղծում /ինչպես նորմատիվ-իրավական, այնպես էլ գիտամեթոդական/, ծանոթացում մանկավարժական, հոգեբանական, մեթոդական և գիտահանրամատչելի գրականության նորույթներին, կրթական ծրագրերի բովանդակությանը, տեսանյութերին, այլ հաստատությունների ուսուցիչների փորձի

ուսումնասիրություն, ժամանակակից ուսումնամեթոդական նյութերի տեսադարանի ստեղծում և այլն։

Կազմակերպչական-մեթոդական աշխատանքի ձևերն են մեթոդմիավորումների նիստերի գումարումը, ուսուցիչների որակավորման բարձրացման պլանավորումը և կազմակերպումը, վարպետության դասերի, սեմինարների, խորհրդակցությունների և նմանատիպ այլ միջոցառումների անցկացումը։

Պակաս կարևոր չէ խորհրդատվական գործառույթը, մասնավորապես մեթոդմիավորման անդամների համար խորհրդատվությունների կազմակերպումը, մանկավարժական և հոգեբանական նորագույն հետազոտությունների արդյունքների ուսումնասիրությունը։

Մեթոդմիավորման գործունեությունն առավել արդյունավետ է, եթե այն կազմակերպված է որպես ամբողջական համակարգ։ Աշխատանքը պլանավորվում է՝ ելնելով դպրոցի խնդիրներից և հեռանկարներից։ Պլանավորմանը պետք է նախորդի բոլոր օղակների խոր վերլուծություն։

Ընդհանրացնելով մեթոդմիավորման գործունեության մասին ասվածը՝ կարելի է եզրակացնել, որ այն դպրոցի զարգացման խթաններից մեկն է։ Դա մանկավարժների որպես համախոհների կուռ միասնություն պիտի դառնա, կազմակերպություն, որի անդամները միավորված են ընդհանուր դիրքորոշմամբ, արժեքներով, ավանդույթներով։

3. ՄԵԹՈԴՄԻԱՎՈՐՈՒՄԸ ՈՐՊԵՍ ՈՒՍՈՒՑՉԻ ԿԱՅԱՑՄԱՆ և ԶԱՐԳԱՑՄԱՆ ԿԱՐԵՎՈՐԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆ

Ցանկացած ուսումնական հաստատության առջև ծառացած ամենաբարդ խնդիր կրթության որակի բարելավումն է։ Վերջինս ենթադրում է կրթական որակապես նոր ծրագրերի ներդրում, նոր տեխնոլոգիաների կիրառություն, ուսուցման գործընթացի կազմակերպման առաջադեմ ձևերի և ուսուցման ակտիվ մեթոդների օգտագործում։ Սակայն ո՛չ գրագետ կազմված ուսումնական պլաններն ու ծրագրերը, ո՛չ նոր տեխնոլոգիաները չեն կարող երաշխավորել կրթության որակը, եթե այդ ամենի «ուղեկցորդը» անկարող է ապահովելու ուսուցման բարձր մակարդակը։ Ուսումնական

հաստատությունում որքան շատ են կարողունակ ուսուցիչները, այնքան բարձր է սովորողների պատրաստվածության մակարդակը, պահանջված՝ ուսումնական հաստատությունը[2]:

Ահա մի պարբերություն «Ուսուցչի հետ աշխատանքի կանոններից»: «Ուսուցիչը նրբագույն գործիք է, որը կրում է մարդկային գործունեության ներկապնակը. նա և՛ փիլիսոփա է, և՛ նվագավար, և՛ կազմակերպիչ, և՛ գիտնական, և՛ հոգեբան, և՛ դերասան: Նրա հետ աշխատելիս անհրաժեշտ է հարգել գործունեության մասին նրա պատկերացումները, օգնել նրան՝ բացահայտելու այդ գործիքի հնչողության բոլոր արժանիքներն ու գեղեցկությունը»[3]:

Ներկայումս ուսուցչի գործունեության ավանդական կարգից, որն արտահայտվում է «առարկայի իմացություն և հստակ վերարտադրություն, մեթոդիկայի իմացություն և կիրառում» բառակապակցություններով, անցում է կատարվում դեպի աշակերտակենտրոն ուսուցում, այսինքն՝ հասկանալ աշակերտին և ապահովել նրա զարգացումը, իսկ դպրոցի և ուսուցչի հիմնական գործառույթն է արդեն մանկական կյանքի կազմակերպումը[4]:

Ուղղվածությունը դեպի աշակերտի անձը, նրա հոգեբանական և ֆիզիկական զարգացումը, ուշադրությունն ու հոգատարությունը յուրաքանչյուր սանի նկատմամբ նոր սերնդի մանկավարժի գործունեության առանցքն է:

Կրթության ներկա վիճակը մանկավարժին թույլ է տալիս ակտիվ դիրքորոշում ունենալ ինչպես կրթության ու դաստիարակության համապատասխան մեթոդների ընտրության, այնպես էլ սեփական մեթոդների, ձևերի, տեխնոլոգիաների ստեղծման գործում: Դա հնարավոր է այն դեպքում, եթե ուսուցչի կյանքի իմաստն է դառնում

---

[2] Проблемы и перспективы развития образования, часть 1, стр. 15:

[3] Правила работы с учителем, Учительская газета

4 Так говорил М.Н.Скаткин, Հարցազրույց մանկավարժի հետ:

կրթությունը, նա ողջ կյանքում շարունակում է սովորել, ունի իր սեփական, անկախ, դրական ուղղվածությամբ մասնագիտական դիրքորոշում:

Ինչպես ամեն մարդու, այնպես էլ ուսուցչին պետք է անընդհատ սովորել: Անկասկած, առանց գիտելիքները, հմտությունները և կարողությունները պարբերաբար նորացնելու քայլել հասարակական և գիտատեխնիկական առաջընթացին համընթաց, աշխատել արդի պայմաններում համարյա անհնար է:

Ժամանակակից աշխարհն այնքան արագահոս է, հարաշարժ, փոխգործուն, որ ավանդական մոտեցումները հաճախ հոգեբանական պատնեշ են դառնում ուսուցչի և սովորողի միջև: Հետևաբար, ուսուցչի համար կենսական անհրաժեշտություն է ժամանակին և նոր սերնդի պահանջներին համապատասխանելը: «Ուսուցիչն ապրում է, քանի դեռ սովորում է: Հենց որ նա դադարում է սովորելուց, նրա մեջ մեռնում է ուսուցիչը», - գրել է Կ.Ուշինսկին:

Ուսուցչի մասնագիտական աճի, կարողունակության ձևավորման և զարգացման համար խթան է դառնում աշխատանքը մեթոդմիավորումում, որտեղ բարենպաստ պայմաններ են ստեղծված մասնագիտական աճի համար:

Նոր ժամանակների ուսուցիչն իր գործի վարպետն է: Նա անհատ է, որը իր մեջ ձևավորում է այնպիսի հատկանիշներ, որոնք անհրաժեշտ են մասնագիտական գործունեության համար: Ժամանակակից բարձրակարգ մանկավարժի բնորոշ գծերից են մշտական ինքնակատարելագործումը, քննադատական վերաբերմունքը իր նկատմամբ, զարգացման բարձր մակարդակը և աշխատանքի կուլտուրան: Ժամանակակից ուսուցչի մեջ զուգորդված են սերն աշակերտների և աշխատանքի նկատմամբ. նա ոչ միայն սովորեցնում է, այլև սովորում իր սաներից Ժամանակակից ուսուցիչը մարդ է, որը կարող է ժպտալ և հետաքրքվել այն ամենով, ինչ իրեն շրջապատում է. չէ՞ որ դպրոցը կենդանի է, քանի դեռ երեխային հետաքրքիր է ուսուցիչը: Նա պիտի բացահայտի երեխաների լավագույն հատկանիշները, յուրաքանչյուրի տաղանդը, ոգեշնչի՝ նոր գիտելիք ձեռք բերելու: Եվ ուսուցչի աշխատանքը գնահատվում է վերջնարդյունքով, այսինքն՝ նրա կրթած ու դաստիարակած աշակերտներով: Չմոռանանք, որ այսօր ոչ թե գնահատականն է կարևոր, այլ գիտելիքը:

Ուսուցիչը, մեթոդմիավորման անդամ լինելով, տեղեկացվում է կրթության նոր բովանդակության, կրթական և դաստիարակչական նորագույն տեխնոլոգիաների, հայ և օտար մանկավարժական փորձի մասին: Ուսուցչի համար կարևոր է նորմատիվ փաստաթղթերին, մեթոդական և հատուկ գրականության նորույթներին ծանոթանալը: Մեթոդմիավորումը ուղղորդում է այդ աշխատանքը. ուսուցիչը հանդես է գալիս զեկուցումներով, մասնակցում սեմինարների, կազմակերպում բաց դասեր, հոդվածներ տպագրում և այլն:

Նախագծի, թեմայի շուրջ կոլեկտիվ աշխատանքը, գործընկերների հետ արդյունավետ փոխազդեցությունն ու համագործակցությունը մանկավարժի համար հնարավորություն են ստեղծում բարձրացնել իրենց մասնագիտական որակը և գիտակցությունը, խթանում են սոցիալական և մասնագիտական ակտիվությունը, մասնագիտական զարգացման, ստեղծագործության, ինքնիրացման ձգտումը:

Ուսուցիչը մասնակցում է մեթոդմիավորման աշխատանքի պլանավորման գործին, որը նպատակահարմար է սկսել գործունեության համակողմանի վերլուծությունից, նախորդ տարվա վերջնարդյունքից: Առաջնայինը, իհարկե, մնում է մանկավարժական և համակարգչային արդի տեխնոլոգիաների միջոցով դասավանդման բարձր որակը ու սովորողների կողմից ուսումնական նյութի յուրացման որակը:

Որպեսզի մանկավարժական անգին փորձն իզուր չկորչի, պետք է այն գրագետ «պահեստավորել», նկարագրել, կազմել հաշվետվություններ, վերջապես հոդվածներ հրատարակել:

Մեթոդմիավորումը կազմում է նաև փոխադարձ դասալսումների ժամանակացույցը: Ե՛վ մանկավարժական վարպետության կատարելագործումը, և՛ օգնությունը սկսնակ ուսուցիչներին կարևորագույն նշանակություն ունեն:

Առաջավոր մանկավարժական փորձն առաջանում է որպես սեփական գործունեության կատարելագործման պահանջմունքի արդյունք: Դպրոցում ուսումնական գործունեության թվացյալ միօրինակությունն արդեն մի քանի տարի հետո տարբերակում է ուսուցիչների երկու խումբ: Մանկավարժներ կան, որոնք շարունակում են գնալ ծանոթ ճանապարհով՝ օգտագործելով փորձված հնարներ, պլաններ, նույնիսկ

արտահայտություններ։ Մյուսները ձգտում են խելամիտ նորին, ուսումնասիրում մանկավարժական առաջավոր փորձը, գտնում իրենց առարկայի դասավանդման որակը բարձրացնելու նոր ուղիներ։ Այդ մանկավարժները մասնակցում են ուսումնամեթոդական հարցերին նվիրված «կլոր սեղանների», խորհրդակցությունների և սեմինարների, լսում և քննարկում ուսուցիչների ստեղծագործական հաշվետվությունները։ Նրանք ձեռնարկում են բաց դասեր՝ չվախենալով յուրօրինակ մոտեցումներից, փորձարարությունից, իրենց գործընկերների քննադատությունից, կարդում են զեկուցումներ, դասախոսություններ դպրոցի մանկավարժական ողջ համակազմի համար։

Լայն իմաստով մանկավարժական փորձը մանկավարժների այնպիսի վարպետությունն է, որը միշտ բարձր արդյունք է տալիս սովորողների կրթության և դաստիարակության գործում: Մանկավարժական առաջավոր փորձին հատուկ են սովորողների ուսուցման, դաստիարակության և զարգացման բարձր արդյունավորությունը, ժամանակի, ջանքերի, միջոցների ծախսման տեսակետից կրթության և դաստիարակության խնայողական կազմակերպումը, ուսուցչի կարողությունը՝ գտնելու մանկավարժական խնդիրների լուծման լավագույն տարբերակներ:

Մանկավարժական առաջավոր փորձի ներկայացման ձևերը, տեխնոլոգիաները հրաշալի գործիքներ են՝ խթանելու ուսուցչի կարողունակության զարգացումը։ Արդյունավետ են վարպետաց դասերը, ուսուցչի պորտֆոլիոյի շնորհանդեսները, դասերի «վահանակային» պաշտպանությունները /դասի արդյունքների ինքնավերլուծություն, որն անցկացվել է դասարանում որևէ նորամուծության արդյունավետությունը գործնականում ստուգելու համար: Դասը ներկայացվում է գործընկերների քննարկմանը, որոնք ներկա չեն եղել դասին, այդ պատճառով դասի բովանդակությունը և մեթոդական մասը ներկայացվում են «վահանակով»:

Մեծ դպրոցներում հեշտ է ձևավորել մասնագիտական զարգացման ներդպրոցական մշակույթ։ Միջազգային հետազոտությունները վկայում են, որ մեծ դպրոցները ավելի բարենպաստ են ուսուցիչների համագործակցված աշխատանքի համար, քանի որ ձևավորվում են մասնագիտական խմբեր, որոնք աջակցում են միմյանց

և փորձի փոխանակում կատարում։ Միջազգային փորձը վկայում է, որ մասնագիտական զարգացման ազդեցիկ միջոց է դպրոցի ներսում ուսուցիչների համագործակցությունը։ Այս մոտեցման դեպքում ստեղծվում են ուսուցչական խմբեր, որոնք համատեղ մշակում են դասի պլաններ, վարում և դիտարկում են դասեր, ապա կատարում դասերի վերլուծություններ։ Նման դեպքերում ուսուցիչները առաջարկներ և դիտողություններ են ստանում իրենց գործընկերներից և հնարավորություն ունենում բարելավելու իրենց աշխատանքը։ Այս առումով Հայաստանում ուսուցիչները շարունակում են մնալ որպես մեկուսացած աշխատողներ։ Դրան նպաստում է այն հանգամանքը, որ ըստ Ազգային վիճակագրական ծառայության՝ Հայաստանի դպրոցների շուրջ 40%-ը գտնվում են գյուղերում և այդ համայնքի միակ ուսումնական հաստատությունն են։ Բազմաթիվ առարկաների գծով դպրոցներում կան մեկական մասնագետներ[5]։

Խոսենք նաև մեր դպրոցի մասին։ Ա.Չեխովի անվան հ. 55 դպրոցում գործում է 7 մեթոդմիավորում։ Դրանք իսկապես համախոհների միություններ են, որոնք գործում են համակարգված, միասնաբար, աշխատանքի համար բարենպաստ բարոյահոգեբանական մթնոլորտում։ Կատարվում է աշխատանքի խելամիտ բաժանում, նույնիսկ ամենադժվար գործ անելիս կարող ես զգալ ընկերոջդ արմունկը։

Ուսումնական ողջ տարվա ընթացքում պարբերաբար խորհրդակցություններ են հրավիրվում մեթոդմիավորումների բոլոր անդամների, դպրոցի տնօրենության մասնակցությամբ։ Նիստերի ժամանակ քննվում են բազմաթիվ հարցեր՝ մեթոդմիավորման փաստաթղթերի վարման կարգը, անհրաժեշտ փաստաթղթերի թվարկը, մեթոդմիավորման ուսուցիչների հետ աշխատանքի հիմնական ուղղությունները (դասին ներկայացվող արդի պահանջներ, փոխգործուն մեթոդների օգտագործման անհրաժեշտություն, ուսուցչի էթիկային, աշակերտների ուսուցվածության մակարդակին և նրանց ուսուցմանը վերաբերող խնդիրներ, տարբեր գրավորների կազմակերպում և անցկացում, հարցաշարերի մշակում և օգտագործում,

[5] Ուսուցիչների մասնագիտական զարգացման եվ կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Բարև գիտակրթական ՀԿ, էջ 30-31

գիտելիքի ստուգումների և կիսամյակային ամփոփիչ գրավորների, ավարտական-քննական գրավորների կազմակերպում ու անցկացում և այլն): Քննարկվում են արդի մանկավարժության և առանձին առարկաների դասավանդման, գիտելիքի ստուգման, գնահատման չափանիշների, հարցաշարերի կազմման սկզբունքներին առնչվող բազմաթիվ հարցեր:

Կրթական գործընթացի մեթոդամանկավարժական ապահովումը դպրոցում անընդհատ բնույթ ունի: Դպրոցի մեթոդմիավորումների գործունեության նպատակը կրթական գործընթացի ռազմավարության ընտրությունն է, ուսումնադաստիարակչական գործընթացի, մանկավարժների մեթոդական ուսուցման կազմակերպումն ու կոորդինացիան, դասավանդման վիճակի, աշակերտների գիտելիքների որակի, նրանց զարգացման մակարդակի ուսումնասիրությունը, մեթոդական աշխատանքի արդյունավետության վերլուծությունը և այլն: Դրանք կազմակերպում են ուսուցիչների հետ պլանաչափ մեթոդական աշխատանքը, որն ուղղված է կրթության բովանդակության կատարելագործմանը: Քննարկվում են տարբեր հոդվածներ, գրքեր: Ուսուցիչները համացանցում որոնում, գտնում են իրենց առարկային և ընդհանրապես մանկավարժության արդի խնդիրներին վերաբերող նյութեր, կարդում զեկուցումներ, որոնք դառնում են հոդվածներ և տպագրվում, իրականացնում խորհրդատվություն:

Մեթոդմիավորումներն ապահովում են առարկայական չափորոշիչների պահանջների և պետական ծրագրերի կատարումը: Ուսումնական տարվա սկզբին՝ օգոստոսյան նիստերում, քննարկվում են մեթոդմիավորումների աշխատանքային պլանները, հաստատվում ուսումնական պլանը յուրաքանչյուր առարկայի կտրվածքով, ճշտվում դասաբաշխումը, որը նախապես կատարվել է նախորդ ուստարվա վերջին: Բոլոր ուսուցիչները մեկ անգամ ևս ուսումնասիրում են առարկայական չափորոշիչները, ծանոթանում մեթոդական նամակներին, գնահատման սկզբունքներին, քննարկում դրանք: Կազմվում են թեմատիկ նոր պլաններ կամ ճշգրտվում արդեն եղածները: Այն փոփոխությունները, որոնք կատարվում են պետական ժամաքանակում, արձանագրվում են: Մեթոդմիավորումների անդամները որոշարկում են իրենց

անելիքները, քննարկում նոր ուսումնական տարում կազմակերպելիք միջոցառումները, կարևորում բաց դասերը կրթության և դաստիարակության գործընթացում:

Մեր դպրոցը մի անգնահատելի առավելություն ունի. ուսուցիչներն աշխատում են միասնական սկզբունքներով և համաձայնեցված: Ղեկավարվելով այն գիտակցությամբ, որ միասնական կոլեկտիվն է ուժեղ և հաջողակ, յուրաքանչյուր ուսուցիչ, ունենալով մանկավարժական իր մոտեցումները, աշխատում է միասնական թեմատիկ պլանով, ընդհանուր ջանքերով ստեղծված զննական պարագաներով, հարցաշարերով և այլն: Ուսուցիչներն իրենց գործընկերների հետ ճշտում են օրվա անելիքները՝ հետաքրքրվելով, թե զուգահեռ դասարաններում աշխատողները որ թեման են անցնելու, ինչ գրավոր աշխատանք են տալու և այլն: Փորձը ցույց է տալիս, որ նման մոտեցումը շատ արդյունավետ է, իսկ սկսնակ ուսուցիչների համար՝ անօրինակ օգնություն:

Մեթոդմիավորումների աշխատանքի կարևորագույն ուղղություններից մեկը աշխատանքն է սկսնակ ուսուցիչների հետ: Մեթոդմիավորումների փորձառու անդամներն անմիջապես օգնության ձեռք են մեկնում երիտասարդներին՝ նրանց ծանոթացնելով մեր դպրոցում ուսուցչի աշխատանքի սկզբունքներին, օգնում են նրանց՝ պլանավորելու դասերը: Պարբերաբար ուսումնասիրվում է այս կամ այն ուսուցչի աշխատանքային կամ որևէ թեմայի դասավանդման փորձը: Այն համակարգվում է. ուսուցիչները կազմում են իրենց մեթոդական թղթապանակները՝ պորտֆոլիոները: Ժամանակի հրամայականով առաջնորդվելով՝ ուսուցիչներն աշխատանքները զետեղում են նաև համացանցում՝ իրենց անձնական էջերում կամ համապատասխան կայքերում:

Բոլոր մեթոդմիավորումների աշխատանքային պլաններում առանձին մասով ներկայացված են դասալսումները և բաց դասերը: Յուրաքանչյուր կիսամյակի սկզբին, հիմք ընդունելով մեթոդմիավորումների նախագահների ներկայացրած տեղեկագրերը, կազմվում է բաց դասերի և միջոցառումների ժամանակացույց: Ուսուցիչները ոգևորությամբ են պատրաստվում բաց դասերին, որոնց ներկա են լինում սովորաբար ինչպես տվյալ առարկան դասավանդողները, այնպես էլ այլ մասնագետներ: Յուրաքանչյուր ուսուցչի կատարած գործը քննարկվում է տնօրենի, նրա տեղակալների, գործընկերների կողմից և գնահատվում ըստ արժանվույն:

Ուսուցիչները պարբերաբար մեթոդմիավորումների նախագահներին են ներկայացնում իրենց կատարած դասալսումների ձևաթղթերը[6]:

Դպրոցի մեթոդմիավորումները կազմակերպում են առարկայական օլիմպիադաներ, աշխատում «օլիմպիական» թիմերի հետ, հարցաշարեր կազմում գիտելիքի ստուգման և թեմատիկ, ամփոփիչ գրավորների համար: Այսօր դպրոցում թեմատիկ գրավորների մեծ բանկ կա:

Ուսուցիչների դասերը, հարցաշարերը, բաց դասերի նկարագրերը, այլ նյութեր դրված են ինչպես դպրոցի, այնպես էլ կրթական տարբեր կայքերում:

Մասնագիտական կարողունակությանը նպաստում է անհատական մեթոդական աշխատանքը, ինքնակրթությունը: Մեր մանկավարժներն ունեն ինքնակրթության թեմաներ, հանդես են գալիս հաշվետվություններով:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Դպրոցի մեթոդմիավորումը մանկավարժների ինքնուրույն կազմակերպություն է, որը նպատակաուղղված կերպով համակարգում և իրականացնում է մանկավարժների մասնագիտական գործունեությունը, նպաստում նրանց կարողունակության զարգացմանը: Դա իրագործվում է միավորման և նրա յուրաքանչյուր անդամի պարտադիր մասնակցությամբ մասնագիտական խնդիրների և դժվարությունների բացահայտման անդրադարձային գործունեությանը, մասնագիտական միավորումների գործունեության ձևերի, մեթոդների և միագումար արդյունքի ախտորոշմանը, նախագծմանը և մոդելավորմանը, դպրոցի միկրոկլիմայի ձևավորմանը և արդյունքների ու կրթության որակի բարձրացման ապահովմանը: Մասնագիտական կարողունակության զարգացումը բոլոր բաղադրիչների քանակական և որակական փոփոխությունն է, որը կատարվում է մանկավարժական-կազմակերպչական որոշակի միջավայրում, գործընկերների հետ փոխազդեցության և աշխատանքային գործունեության պայմաններում: Ուսուցչի մասնակցությունը մեթոդմիավորման

[6] Ա.Չեխովի անվան հ. 55 դպրոցի ներքին գնահատման հաշվետվություն /կազմող՝ Ն.Սադոյան/

աշխատանքին խթանում է մանկավարժների մասնագիտական աճը, դրդում սեփական գործունեության ինքնավերլուծության, մասնագիտական անդրադարձի, ստեղծարարության, նորանոր գիտելիքների ձեռքբերման, զարգացնում նրա աշխարհայացքը, արժեհամակարգը, անհատի բարոյական հատկանիշները, մանկավարժական մտածողությունը, մանկավարժական հմտությունը։

Հայաստանում կրթության ասպարեզում հաջողության հասնելու համար պետք է ամենակարևոր դերը տալ ուսուցչին, բարձրացնել նրա հեղինակությունը, երիտասարդ մասնագետների համար գրավիչ ու շահավետ դարձնել ուսուցչի աշխատանքը։

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Մեթոդմիավորումը դպրոցում, Մշակում համացանցային նյութերից, https://old-lib.armedu.am/resource/846
2. Ուսուցիչների մասնագիտական զարգացման եվ կրթության բովանդակության գնահատումը՝ Հայաստանում հանրակրթության բարեփոխումների համատեքստում, Բարև գիտակրթական ՀԿ, 2013
3. Օրինակելի կանոնադրություն «Հայաստանի հանրապետության պետական հանրակրթական ուսումնական հաստատություն» պետական ոչ առևտրային կազմակերպության, կետ 91-95
4. Лазарев В.С., Мартиросян Б.П, Педагогическая инноватика, Москва, 2006
5. Педагогическое обозрение • 2017 • май
6. Гаргай, В.Б. Повышение квалификации учителей на Западе: рефлексивная модель обучения / В.Б.Гаргай // Педагогика. — 2004. № 2.
7. Проблемы и перспективы развития образования, часть 1
8. Орлов А.А., Агафонова А.С., Введение в педагогическую деятельность: Практикум, Москва, «Академия», 2004
9. Ա.Չեխովի անվան հ. 55 դպրոցի ներքին գնահատման հաշվետվություն /կազմող՝ Ն.Սաղոյան/